14.06.2021թ. կնքված **ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ**-2021-36-06 պայմանագրի շրջանակներում մատակարարման ժամկետի վերաբերյալ

համաձայնագիր № 2

ք. Երևան 23 օգոստոսի 2021թ.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Արտավազդ Վանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «ՆԱՆԱ ՄԵԴ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Կ.Գրիգորյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով քաղաքացիական օրենսդրությունը և № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-36-06» պայմանագրի 8.6 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

Համաձայնագրի առարկան

1. Հաշվի առնելով մատակարարի դիմումը, հիմք ընդունելով 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը, հետագա համագործակցության համար կողմերը որոշեցին 2021թ. հուլիսի 13-ին կնքված № 1 համաձայնագրով ուժի մեջ դրված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:

2. Սույն համաձայնագիրը համարվում է № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-36-06» գնման պայմանագրի անբաժանելի մաս:

3. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:

4. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ	«ՆԱՆԱ ՄԵԴ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, 0025, Մ.Հերացի 12	Հասցե՝ ք. Երևան Ծարավ Աղբյուր 55/11 բն. 172
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 900018004649	Հ/Հ 220463331359000
ՀՎՀՀ 02625503	ՀՎՀՀ 03543937
Գլխավոր տնօրեն՝ Ա.Վանյան	Տնօրեն՝ Կ.Գրիգորյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ